

XI. ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ ՈՒ ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ժամանակաբանական սկզբնագրի վերականգնումը նոր գրություն է ստեղծում հորենացու աղբյուրների վավերականության ասպարեզում էլ:
2. Արխատն Փեղզացու օրինակը:
3. Սրանց վավերականությունը նոր կշիռ է տալիս այն տեղեկություններին, որ հորենացին տալիս է սրանց երկերից բաղկելով:
4. Եթե մոխրափայլության պարագլուխ համարենք Գուշմիտին, իսկ մոխրափայլության պարագլուխ՝ Կոնիբերին, ապա պետք է տեսնել, որ Գուշմիտ իբրև հորենացու քննադատ թեր-վում է ցած, իսկ Կոնիբեր՝ հաղթանակում:

XII. Գ ԳԻՐՔ

1. Այսքանը և այս չափով վերաբերում էր Ք գրքին:
2. Վերականգնելուց հետո:
3. Այս մասը պատրաստ է ընդհանուր գծերով և վերջնական կերպարանքով, կղեկուցվի հետո:
4. Միայն կանխելով կարող ենք ասել, որ ինչպես Ք գրքում վճռական նշանակություն է ւնեցել Արտավազդ Ա-ի տարիների ազավադումը, այնպես էլ Գ գրքում ազդել է Արշակ Բ-ի տարիների ազավադումը:
5. հորենացու այժմյան բնագիրը Արշակին տալիս է 30 տարի, Մերետս ու Ասողիկ 7 տարի (հմտ. է ու է տառերի նմանությունը):
6. Մեր կարծիքով հորենացու սկզբնագրի մեջ Արշակին տրված է կղել ժէ—17 տարի:
7. Այս ուղղումը բաց է անում Գ գրքի էլ ժամանակաբանական կծիկի խճճումները:
8. Սահակ-Մեսրոպի մահերը 440-ից զետեղված անցնում և սրանով վերանում են հորենա-ցու V դարի հեղինակ լինելու ժամանակաբանական առարկությունները:

ՎԵՐՋԱՔԱՆ

1. Մովսես հորենացու V դարի հեղինակ լինելու դեմ արվող ժամանակաբանական առար-կություններն ըստ իս ամենազրկավոր առարկություններն են:
2. Մնացած բանասիրական առարկությունները մեծ մասամբ առածգական են:
3. Չպետք է մոռանալ, որ Կոնիբերի Գուշմիտ 632—642-ից զետեղված (Kleine Schriften, III, էջ 333, 1893 թ.):
4. Նորագույն մաթեմատիկով հորենացին IX դարի վերջերքում:
5. Այսուհետև տեսնություն պատմաբանը կարող է հորենացու երկը համարել վաղ միջ-նադարյան կյանքի արձագանք:
6. հորենացու «Պատմություն» ժամանակաբանական սկզբնագրի վերականգնումը հորե-նացուն VII դարից ավելի շուտ զետեղվեց V դարն է տանում քան զետեղվեց... IX:
7. Թրակոսոված քերթողահայրը՝ բարձրազրկու:

ԽՈՐԵՆԱՅԻՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

հորենացիի պատմագիրը բնող մեկը զարմանով հարց կուտա ինչդիրն, թե ինչու պատմահայր Հայաստանի հեթանոսական դարերու պատմության համար իր աղբյուրները հի-շատակելուն, բոլորովին կանտեսե բանի մը առաջնակարգ պատմական գործեր—և անոնք ալ հունարեն գրված—որոնց մեջ շատ ավելի ընդարձակ տեղեկություններ կրնար գտնել Հայաս-տանի մասին, քան իր հիշածները:

Ինչ, չեմ հելլենասեր, որ գրքի սկիզբն իսկ կգրե. «Եվ այս բանի վրա թող ոչ ոք չզարմա-նա, որ թեպետ շատ ազգեր մատենագրություններ են ունեցել, ինչպես ամենքին հայտնի է,

մասնավանդ պարսիկներն ու քաղղեացիները, որոնց մեջ ավելի շատ են գտնվում մեր աղգին վերարերող րազմաթիվ գործերի հիշատակությունները, մենք սակայն միայն հունաց պատմագրությունները հիշատակեցինք և այնտեղից խոստացանք առաջ բերել մեր ազգարանությունը» (11, ր).—չես գիտեր ինչու, իր ցանկեն դուրս կգնե քանի մը հունագիր պատմագրողներ, որոնք իր ատեն նշանավոր եղած էին, ինչպես այսօր իսկ են:

Տանք գոնե շորս հեղինակի անուն՝ Քսենոփոն, Պլուտարքոս, Դիոն Կասիոս և Ապպիանոս Աղեքսանդրիացի:

Խորենացին, որ Մեծն Տիգրանը շփոթելով Երվանդյան Տիգրանի մը հետ, գովաստական խանդավառ րաուեր կշարե. Տիգրան «մեր թագավորներից ամենահզորն և ամենախոհման էր և նրանցից բոլորից քաջ... բոլոր իր ժամանակակիցներին նախանձելի եղավ, իսկ հետո եկողներին ցանկալի թե ինքը և թե իր ժամանակը» (Ա, իգ), որքան իր սիրտը թռնագ ելլեր, եթե Պլուտարքոսի մեջ կարդար Տիգրանի մասին, օրինակ, հետևյալը. «Կարիքայեն քանի մը օրվա ճամփա է Հայաստանը, ուր կտիրապետե Տիգրան, արքայից արքան, շրջապատված այն ահեղ զորությամբ, որ Ասիան պարթևներեն գրավեց, հունական գաղութներ մինչև Ատրպատական փոխադրեց, Սյուրիան և Պաղեստինը իրեն հպատակեցուց, Սելևկյան արքայազունները փախուստական դարձուց և անոնց կիներն ու աղջիկները գերեվարեց...» Կամ. «Թագաժառանգը և պարթևական պետությունը նվաստացուց ավելի քան ունի ռորիշ թագավոր իրմե առաջ»: Կամ միեևույն Պլուտարքոսեն իմանար հանձարեղ Արտավազդ թագավորի մասին, որ թատերախաղեր, պատմություն և ճառեր գրած էր: Արտավազդը, որ Խորենացին, մեզի անձանոթ աղբյուրն խարված, այնքան խոտելի մեկը կներկայացնե. «Ուրիշ ոչ մի արիություն և քաջագործություն ցույց չտվեց, այլ անձնատուր կերուխումի, ու անփույթ լինելով ուսման, քաջություն և բարի հիշատակների, միայն իր փորի ծառան և ստրուկը դառնալով աղբյուրներն էր մեծացնում» (Բ, իր):

Նույնպես Ապպիանոս. Տիգրան, որ «կրկնեց զրացի աղգերը, որոնք անկախ թագավորներ ունեին, և այս հաղթանակներուն պատճառով ստացած էր Արքայից Արքա տիտղոսը»:

Իսկ Դիոն Կասիոսի մեջ ընդարձակ տեղեկություն կա ոչ միայն Տիգրանի և Արտավազդի մասին, այլ Հայաստան և հիմա անոնցմե վերջն ալ քանի անգամներ մինչև երրորդ դարու սկիզբները:

Քսենոփոնի Անաբասիս և Կյուրոսասպատում գործերուն մեջ հայոց երկիրը կհիշվի ավելի հին, քան Տիգրանի ժամանակը:

Իրավունք ունինք ենթադրելու, թե մեկն ավելի հունագիր պատմություններ, որ Խորենացիի օրով գոյություն ունեին, այժմ կորսված են: Հիշենք գոնե երկու հատը՝ Ստրաբոն և Մեմնոն Հերակլիացի:

Ստրաբոն գրած էր պատմություն մը, որ Հովսեփոս և Պլուտարքոս կհիշեն: Հավանաբար սույն գրքի մեջ Հայաստանի մասին ընդարձակ տեղեկություններ կային:

Մեմնոն Հերակլիացիի գրած պատմությունը քանի՞ հատորներն կամ գրքերն րադկացած էր, չենք գիտեր: Փոքր պատրիարք սույն պատմության 10 գրքեն մինչև ԺՋ հատորը կարդացած էր, որմե համառոտագրությունը բրած է: Փոքր կհիշե ԺՋ հատորեն վերջ եղածներու մասին ալ: Մեմնոնեն մեղի հասած հատուկտորներու մեջ կհանդիպինք Տիգրանին և իր կնոջ Կլեոպատրային:

Ալ չենք խոսիր մեր Արտավազդ թագավորի գրած պատմության մասին, որ անտարակույս Հայաստանի պատմություն եղած պետք է ըլլար, եթե ոչ Արտաշեսյան հարստության, Արտաշեսն մինչև Տիգրան:

Չենք կրնար հավատալ թե Պլուտարքոսի, Դիոն Կասիոսի և Ապպիանոսի անունները անձան Թ մնացած էին Աղեքսանդրիո համրավավոր գրադարանը հաճախած Խորենացիին: Մանավանդ րարոյախոս և կենսագիր Պլուտարքոսինը: Անոնց համրավր գրքեր տեած է և հասած մեր օրերը: Մինչև Խորենացիի պատմության Ա գրքին մեջ հիշված օտարագրի պատմիչներուն գրեթե ամենուն ալ գործերը կորսված են. Մար Աբաս, Բեռոսոս, Աղեքսանդր Բազմավեպ, Արյուդենոս, Կեփագիոն, Ոլիմպիոդորոս: Նույնպես Բ դրքեն, Հուլիոս Ափրիկանոս, Հյուպոդիտա, Պոլիյրատոս, Մանեթո, Նվազրոս, Կամադրոս, Փլեգոնիոս, Ուլյուպ, Արիստոն Փելլացի, և այլն, և այլն:

Կրնանք հանելուկը լուծել, ըսելով թե երր Խորենացին իր գրելիք պատմության համար աղբյուրներ կփնտրեր. մանավանդ ամենադժվարին սկզբնական շրջանի մասին, իր ընտրությունը կատարած ըլլալու էր սահմանափակ շրջագծի մեջ: Հավատացյալ քրիստոնյա մարգ, անպիսի ընտրեր միմիայն այն հեթանոս հեղինակները, որոնք եկեղեցվո հայրերու հավանության

արժանացած էին և որոնց գրած պատմագրքերը չէին հսկասեր Հին կտակարանի պատմածներուն:

Եվ իրապես, խորենացին ինքն իսկ կհայտնեն իր ընտրության սահմանափակ շրջափածը, երբ կգրեն. «Եվ կսկսեմ ալն տեղից, որտեղից սկսում են եկեղեցական (մատենագիրներն) ըստ քրիստոնեական կրոնի, ավելորդ համարելով երկրորդիլ արտաքին հեղինակների առասպելները սկզբնական պատմության մասին, բայց հետագայից կհիշենք որոշ ժամանակներ և հայտնի անձեր, որքան նրանք զուգադիպում են Սուրբ Գրքի պատմության» (Ա, գ):

Աղբյուրներու ընտրության մեջ այս կաշկանդումը իր անձնական տեսակետը չէր, այլ I^o և V^o դարերու քրիստոնյա մտավորականության Բացատրենք:

Երբ քրիստոնեությունը սկսավ տարածվիլ և զորանալ Հռոմեական կայսրության մեջ, հեթանոս գրողներ պայքար սկսան անոր դեմ: Անոնք շեշտեցին իրենց կրոնի պատկառելի հնությունը և անգոսնելով ծաղրեցին այս նորելուկ կրոնը, որ անցյալ շուներ, բայց կնկրտեր չափվիլ բազմազարյան հեթանոս կրոնի հետ: Նաև կծաղրեին, թե քրիստոնյաները իրենց կրոնը կրնդունին սոսկ հավատքով, առանց քննության:

Այս շարունակական քննադատությունները հայտնորեն կշղայնացնեին քրիստոնյա տեսարանները, որոնք զգացին սույն հարձակման պատասխանելու անհրաժեշտությունը:

Եվսերիոս—եկեղեցական պատմության հայրը—IV դարու սկզբին կպատասխանե եկեղեցվո թշնամիներուն, իր հաշվով, զորավոր համարված փաստերով ապացուցանելու քրիստոնյա կրոնի հնությունը, ավելի հին, քան հեթանոս քննադատներու կրոնը: Եվսերիոսի «Ավետարանական պատրաստություն» գիրքը, տասնհինգ մասերն բաղկացած, ոչ միայն պաշտպանողական է, այլ նաև հարձակողական: Ան կծաղկե հեթանոս առասպելները որպես այլանդակ և սնոտի բաներ, և կհակաճառե անոնց այլարանական մեկնարանություն տվողներուն: Ան վճռականորեն կհավաստե, թե հեթանոս կրոնական գաղափարներու աղբյուր ծառայող նշանավոր փիլիսոփաներն և օրենսդիրներն ժամանակավալ ալ ավելի հին են Մովսես մարգարեն և մյուս հրեա մարգարեներ: Եվ որովհետև այս մարգարեները կանխատեսեցին Քրիստոսի գալուստը, ուրեմն Քրիստոսի հաստատած կրոնը ոչ թե նոր է, այլ մարգարեներու կրոնին շարունակությունը:

Իր այս թեզին որպես կուսման Եվսերիոս զանազան հեղինակներն մեջբերումներ կընեն հրեաներու հնությունը ցույց տվող, ինչպես Հովսեփոս, Տատիանոս, Կղեմես Աղեքսանդրացի և ի մասնա՝ Դորի՝ Հուլիոս Ափրիկանոս, որուն պատրաստած բաղդատական ժամանակագրությունը հրեա-քրիստոնյա և ապա հեթանոս պատմությանց, Եվսերիոս պիտի օգտագործեր իր Քրոնիկոնին համար:

Քրոնիկոնին մեջ հին ազգերու մասին գրելուն, ինչպես Քաղդեա, Ասորեստան, Մարաստան, Պարսկաստան, և այլն, Եվսերիոս իրեն աղբյուր կընտրե այն պատմաբանները, որոնք, կըսեն, համանմանություն ունենին հրեական պատմության հետ: Այսպես, հառաջ կըջն Բեռոսոս, Արյուդենոս, Բազմավեպ, Կեփաղիոն, Իրոդորոս Սիկիլիացի, Կաստոր, Հովսեփոս: Հետո նաև՝ Փլեկոն, Լոնկինոս, Տալլոս, Պորփյուր:

Քրիստոնյա տեսարաններ կշարունակեն պայքարը Փաստերու փնտրտուքը գիրենք կմղե հին պատմական գործեր ուսումնասիրելու (Ինքնին օգտակար պրաղում: Եթե պայքար չըլլար, պիտի չկարգային):

Երբ 410-ին Ալարիկ գրավեց և ավարի տվավ Հռոմ քաղաքը, հեթանոս գրողներ պնդեցին, թե այս անպատմելի աղետին պատճառը քրիստոնյաներն էին: Օգոստինոս եպիսկոպոս, որպես պատասխան սկսավ գրել «Աստուծո քաղաքը» գիրքը, և իր թելադրությամբ սպանացի Ուլրոսիոս քահանան ալ, ցույց տալու թե աղետներ և շարիք հեթանոս կրոնի տակ ալ տեղի ունեցած են, չպատմագրքեր խառնշուկեց և վրեց «Յոթ գրքեր պատմության ընդդեմ հեթանոսաց», որ միջին գարուն քրիստոնյաներու սիրած պատմագիրքը պիտի ըլլար:

Վրնանք հետեցնել, թե այսպիսով քրիստոնյա տեսարաններ հեթանոս պատմագրողներն ընտրովի ցանկ մը հայթայթած կըլլային, որ քրիստոնյա պատմաբաններ կրնային գործածել առանց գայթակղության:

Խորենացին ալ իր դրքի Ա մասին մեջ կօգտվի այս կարգի հեղինակներն, որոնք հիշված են Եվսերիոսեն. օրինակ՝ Բեռոսոս, Արյուդենոս, Բազմավեպ, Կեփաղիոն: Մեր կողմն այս շորսին շիշատակումը դիտումնավոր է, քանզի մեզի կթելադրե հետևյալ հարցումը. արդյոք պատմահայրը այս շորս հեղինակները կարդացած էր, եթե ոչ պարզապես Եվսերիոսին կարձագանքեր:

Հայ գրականներու առհասարակ կըսեն թե խորենացին չէր կարդացած այս հեղինակներու օրինակ:

Ստեփան Մալխասյան. «Հիշում է (հորենացին) նաև Բեռնոս Բաղդեսցուն, Աղեքսանդր Բազմավեպին, Արյուդենոսին, Կեփաղիոնին, որոնց նա ծանոթ է Եվսերիոսի ժամանակագրության միջոցով և ոչ թե անմիջապես»¹։ Ապա հատորի վերջին տրված ծանոթություն 9-ի մեջ կր-
կրկնե միևնույնը։

Մանուկ Արեղյան. «Սակայն այդ հին նշանավոր պատմագիրների (Բեռնոս, Արյուդենոս, Բազմավեպ, Կեփաղիոն) գրվածքներն, ինչպես երևում է, հորենացին ձեռի տակ չի ունեցել, այլ օգտվել է Եվսերիոս Կեսարացու «Քրոնիկոնից», որովհետև ինչ որ նա բերում է՝ կա այս
այս գրքի մեջ»²։

Ջարպահանյան. «Այս աշխատանաց մեջ ալ ընդհանրապես հետևող եղած է հորենացին Փվսերիոսի, վասնզի այնպիսի արտաքին պատմիչներ կ'իշխտակե, որոնք յուր ժամանակը ար-
դեն կորսված էին, և որոնց միայն քանի մը հատվածք իրմե ժամանակավ երիցագույն Կեսա-
րիոս կ'սկզկոպոսին (Եվսերիոսի) ձեռքն անցած էին»³։

Ըստ այս Մխիթարյան հեղինակին, ոչ միայն հորենացին չէ կարդացած սույն հին պատ-
մագիրները, այլ Եվսերիոսն ալ, որոնք ձեռքը անցած է քանի մը հատվածք։

Արր. Զամինյան. «Հորենացիություն օտար աղբյուրներու մեջ են նաև Աղեքսանդր Բազմավեպ, Արյուդենոս, Կեփաղիոն և Ափրիկանոս հեղինակներու Բայց հորենացին ոչ թե անմիջաբար ծա-
նոթ է սոցա գործերուն, այլ Եվսերիոսի «Քրոնիկոնի» միջոցով, որ թարգմանված է Ե գարու
մեջ»⁴։

Մենք համաձայն չենք վերոհիշյալ հեղինակներու ըսածին։

Հորենացին կարդացած էր սույն չորս պատմագիրները, ինչպես և կարդացած այն բազ-
մաթիվ աղբյուրները, որոնց անունները կուտա և որոնցմե քանիներուն համար ալ քննադա-
տական խոսք ունի։

Ջարպահանյանի ըսածը, թե հորենացիի ժամանակ արդեն կորսված էին, անընդունելի է,
քանզի հորենացին վերջ, հաջորդ դարերուն այդ գրքերն մեկը կամ մյուսը կարդացողներ
եղած են, օրինակ, VI դարուն՝ Ստեփանոս Բյուզանդացի, Կյուրեղ, IX դարուն՝ Գեորգ Սեն-
կելլոս, Փոտ պատրիարք։

Լավ կըլլա որ համառոտակի ծանոթանանք այս չորս պատմիչներուն։

Բեռնոս—ժամանակակից Մեծն Աղեքսանդրի և ապա Անտիոքոս Սոտերի, որուն նվիրեց
փր «Բարեկոնապատում» դիրքը։ Հատորը երեք մասն կրսղկանար։ Ա—ստեղծագործութենեն
մինչև ջրհեղեղ, Բ—ջրհեղեղեն մինչև Նարոնասար, Գ—Նարոնասարեն մինչև Աղեքսանդր և
Անտիոքոս։ Այս գործեն հատուկորեն հասած են մեզի Արյուդենոսեն, Ապոդոտորոսեն և
Բազմավեպեն։

Բեռնոս մեծ հեղինակություն կվայելեր լատին և հույն հեղինակներու մոտ. Պլուտարքոս,
Եվսերիոս, Գեորգ Սենկելլոս, Հովսեփոս, Պլինիոս, Աթենաոս, Սենեկա, Պոսանիոս, Հերենիմոս
և այլն կ'իշեն զինք և իր գործերն մեթերում կրեն։ Տառիանոս իրավամբ զինք կոչած էր
«ամենաուսումնական պատմարանը Արևմտյան Ասիոյ։ հորենացիի բառերով՝ «բյուր գիտու-
թյուններին բաշահմուտ մարգուն»։ Բեռնոս ըլլալով Բել-Մարդուկ աստուծո քուրմը, անկաս-
կած տաճարի արխիվներն օգտված էր։ Պլինիոս կրսն, թե Աթենքի քաղաքացիները իր արձանը
կանգնեցրին ոսկեզօծած լեզվով։

Արյուդենոս—հույն պատմարան մը ժամանակակից Բեռնոսի և աշակերտ անոր։ Գրեց
Քաղեկայի պատմությունը, որմե հատուկորեն հասած են մեզի Եվսերիոսի, Կյուրեղի և Սեն-
կելլոսի գործերուն մեջ։

Կեփաղիոն—ապրած Ադրիանոս կայսեր ժամանակ։ Երեք ինն մասերն բաղկացած պատմու-
թյուն մը Նինոս և Շամիրամեն սկսած մինչև Աղեքսանդր։ Կայսրը զինք աքսորեց Սիկիլիա, ուր
հորինեց այս պատմությունը, որմե հատուկորեն ունին Եվսերիոս, Սենկելլոս, Փոտ պատ-
րիարք, Սուրիդաս։

Աղեքսանդր Կոնստինտոս—Սուլլայի ժամանակակից։ Հույն կամ փոյուզիացի գերի մը, որ
խոր հմտության պատճառով կոչված է Բազմավեպ։

1 Մ ո վ ս ե ս հ ո Ր Ե Ն ա ց ի, Հայոց պատմություն, աշխ. թրգմ., Երևան, 1940, ներա-
ծություն, էջ XXXII։

2 Մ. Ա Ր Ե Ղ Յ Ա Ն, Հայոց հին գրականության պատմություն, հատ. Ա, Երևան, 1944, էջ
263։

3 «Պատմություն հին հայ դպրության», Դ տպ., Վենետիկ, 1932, էջ 355։

4 Զ ա մ ի ն յ ա ն, Պատմություն հայոց հին գրականության, Պեյրուս, 1941, էջ 99։

հորենացին Բազմավեպին միայն անունը կհիշե Բեռնոսի և Արյուդենոսի հետ միասին իսկ Բեռնոսին համար կըսեն՝ Պողոմենոս թագավորեն հրահանգ ստացավ հունարենի թարգմանելու «ուրիշ ազգերի թագավորների դիվանների և մեհյանների գրքերը»:

Ինչպես կտեսնենք, Բազմավեպի և Բեռնոսի պարագային կրնանք կասկածիլ, թե հորենացին կարդացած չէր կրնար ըլլալ զանոնք և Եվսերիոսեն կրնորինակեր: Բայց երբ հորենացիի Արյուդենոսի և Կեփաղիոնի մասին գրածները կարդանք, կասկած չենք ունենար, թե հորենացին կարդացած է զանոնք, և անոր հիման վրա ալ հավանական կգտնենք, որ մյուս երկուքն ալ կարդացած էր:

Արյուդենոս Ասորեստանի թագավորները կթվարկե Բելին մինչև Նինոս, որ կգտնվի թե՛ Եվսերիոսի և թե՛ հորենացիի մեջ: Սակայն մեր պատմահայրը միևնույն Արյուդենոսին կառնե հայերու ալ ցանկը, Հայկեն մինչև Արա Եղեցիկ, որ Եվսերիոս շունի հորենացին կհավելու թե. «Եվ սա ճշմարիտ է, ոչ ոք չկասկածի, որովհետև այս բաները մեզ պատմում է շատ բաներում վստահելի Արյուդենոսը»: Եվ հայ ցանկը տալիս վերջ կգրե. «Այս բանն ասում է Արյուդենոսը իր առաջին առանձին մանր ազգարանություն մեջ, որ վերջերս ոմանք դեն ձգեցին» (Ա, Ե):

Միթե կարելի է տարրեր եզրակացություն հանգիլ քան այն, թե հորենացին Արյուդենոսը կարդացած էր:

Հայաստանի գիտնականներեն Հ. Ս. Անասյան իր «Հայկական մատենագիտության» մեջ Արյուդենոսի մասին խոսելուն, ընդունելով հանդերձ, թե հորենացին Եվսերիոսի ժամանակագրության հայերեն թարգմանությունն առած է, հայ թագավորներու ցանկի մասին կարծես բնական շղարած կհավելու:

«Սակայն արդյո՞ք կարելի է ընդունիլ, որ Մովսես հորենացու ձեռքում եղել է ժամանակագրության հայերեն թարգմանության մի ավելի հին և հազվագյուտ օրինակ ևս, որի մեջ իրոք գտնվելիս է եղել հիշյալ հատվածը, իսկ մյուս օրինակների մեջ չի եղել, և կամ արդյո՞ք թույլատրելի է ենթադրել, որ այդպիսի մի հատված եղել է ժամանակագրության հունարեն ընագրում, չմոռանալով, սակայն, հաշվի առնել, որ հունարեն ընագիրը Մովսես հորենացու ձեռքի տակ հավանաբար չի եղել»:

Բայց ինչու այդպիսի բան հունագետ հորենացին Արյուդենոսը հունարենով կարդացած չըլլար: Իր օրով այդ գիրքը գոյություն ուներ, ինչպես նաև ուրիշ շատ հունարեն գրված գրքեր, որ իրեն աղբյուր ծառայած էին, և որոնք այնքան օտարոտի կհնչեն մեր ականջներուն, Պոլիկ-րատես, Եվագարոս, Կամագրոս, Փլեգոնիոս, Արիստոն, Պոլուզ, Հյուպոգիտա, Պաղեփատոս, Փիլեմոն և այլն: Միթե հորենացին իր պատմության սկիզբն իսկ չըսեր, թե «մենք սակայն միայն հունաց պատմագիրները հիշեցինք և այնտեղից խոստացանք առաջ բերել մեր ազգարանության շարքը» (Ա, Բ): հորենացին, եթե օտարազգի աղբյուր մը գիտե, որ ձեռքին տակ չունի, կըսե այդ Կարկառուն օրինակ ասոր՝ (Բ, ա) «Ոչ նույնիսկ Դիոդորի գրվածքները մեր ձեռքի տակ են, որ աչքերս նրա վրա պահելով բոլորն անմոռաց շարադրեցինք»:

Այսպես ըսելու համար ան առնեք կարդացած ըլլալու է Դիոդորի գիրքը, որ կավաղե, թե ձեռքի տակ չունի Դիոդորոս Սիկիլիացին աշխարհի պատմությունը գրել իրեն կյանքի նպատակ համարեց, երեսուն տարի աշխատեցավ և քառասուն գրքով գրեց ամենահին ժամանակներեն մինչև Հուլիոս Կեսար: (Մալխասյան, Կերեկի թյուրիմացությունը, հորենացիի օգտագործած բայց չհիշած աղբյուրներու մեջ կգնե Դիոդորոս Սիկիլիացին: Ինչպես տեսանք, հորենացին կհիշե այդ, բայց չունիմ՝ կըսե):

Կեփաղիոնի մասին ալ գրելուն հորենացին կըսե, թե ան ալ կվկայե ասորի և հայ թագավորներու ցանկի մասին և կուտա հատված մը, որ չկա Եվսերիոսի մեջ: «Սրանց վկայում է և Կեփաղիոն, որ ասում է (իր գրքի) գլուխներից մեկում. «Մեր աշխատության սկզբում սկսեցինք մանրամասն գրել բոլոր ազգարանություններն արքունական դիվաններից առնելով, բայց թագավորներից հրաման ստացանք՝ հենցից բաց թողնել անհշան և վատասիրտ մարդկանց հիշատակությունը, այլ հիշել միայն բաշ, իմաստուն և աշխարհակալ նախնիներին և մեր ժամանակն իղուր չվատենն»:

հորենացի Ա, ժը գլուխը կակսի այսպես. «Ես նկատի ունիմ Կեփաղիոնի պատմածն ալ, որպեսզի շատերին տեղիք չտամ մեզ ծաղրելու...»: Երբ ըսելիքը այսպես սկսելու համար հորենացին գիտեր, թե հայ մտավորականներու մեջ Կեփաղիոնը կարդացողներ եղած կրնան ըլլալ, որոնք գիտե պիտի ծաղրեն, երբ իր գրածը տարբեր պտենն Կեփաղիոնի ըսածեն:

5 Հ. Ս. Անասյան, Հայկական մատենագիտություն, հատ. Ա, Երևան, 1959, էջ 60—61:

հորենացիի Ա գրքի մեջ հիշված մյուս օտարազգի աղբյուրներու մասին չենք խոսիր: Մեր նպատակն էր հարց տալ, թե ինչու պատմահայրը քանի մը հունարեն հանրածանոթ աղբյուրներ չէ գործածած, և առ այդ ենթադրությունը ընել:

Ի՞նչ բազմազան քննություններու առիթ տվող գիրք է հորենացիի պատմությունը, և որպիսի՝ թանկարժեք գանձ մը ունի հայ ժողովուրդը:

Խեղճ հորենացի որքան մտքի տառապանք—հոգեկան տանջանքն զատ—ունեցած ըլլալու է իր գրքի Ա հատվածը շարադրելուն: Առաջադրած ըլլալով հայոց պատմությունը սկսել չրհեղեղեն վերջ, Նոյի թողնալ թող Թորոգմի որդվով, քանի քանի դար ժամանակամիջոց պետք է լեցնեն, և այդ ալ հատուկտոր, հոս հոն տարտղնված, օտարազգիներու գրքերուն մեջ ցան ու ցիր, մանր-մունր տեղեկություններն ինք, ճշգրիտ ժամանակագրության սիրահար, գիտեր այն հարավոր տարիները, զորս մի կերպ պետք է լեցնեն: Ափրիկանոսի ժամանակագրութենեն, ինչպես նաև Եվսեբիոսին սովորած էր, թե չրհեղեղեն մինչև Հիսուսի ծնունդը 3238 տարվա շրջան է: Այդ երեք հազար տարիներու հաշիվը պետք է տար պատմականորեն:

ՀՐԱՆՏ Ք. ԱՐՄԵՆ
(ԱՄՆ, Կալիֆոռնիա)

ՔԱՂՄԱԿԻ ԵՆԹԱԿԱՅԻ ԵՎ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ԹՎԻ ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Գրաբարում ենթակայի և ստորոգյալի թվի համաձայնության մեջ հատկապես կարևոր է բազմակի ենթակաների և ստորոգյալի համաձայնությունը թվով, քանի որ բազմակի ենթակաները գործողության առանձին կատարողների ստականան շարան չեն, այլ իրար նկատմամբ գտնազան (լրացում-լրացյալ, մաս-ամբողջություն, հակադրվող-հակադրող և այլն) հարաբերությունների մեջ են մտնում, որից ելնելով էլ պայմանավորվում են մի շարք բազմակի ենթակաների ստորոգյալների թվերը:

Բազմակի ենթակաների ստորոգյալը (կամ ստորոգյալները) որպես կանոն հոգեակի թվով պետք է գրվի անկախ այն բանից, թե ենթակաները որ թվով են գրված՝ եզակի, թե՛ հոգեակի, հավաքական իմաստ ունե՞ն, թե՛ ոչ: Այսպես, «Ինչի և արեկցութիւն ԱՊԱԿԱՆԵՆ» (Յ, 103), «Մուշեղ և ամենայն զօրքն հայոց անշափ ԱՌԻՆ զաւար... և անշափ ԼՅԱՆ զանձօք... և բազում աւարամասն Պապայ ՊԱՂԷԻՆ» (Փ, V, Բ, 241), «Եւ զօրն և տունն տոհմին Աղմեկաց կոչմանն ԱՊՍԱՄՐԵՅԻՆ, յարքայէն հայոց Արշակայ և ՉՈՒԱՆ ԿԱՅԻՆ առաջի արքային Պարսից» (Փ, IV, Ծ, 205):

Եթե բազմակի ենթակաները ամփոփող մի բառ կա, ինքը դառնում է ենթակա և հոգեակի թվով էլ ստորոգյալ է պահանջում. «Յուպ քո և գաւազան՝ նոքա ՄեծԹԱՐԵՍՅԱՆ զիս» (ԴՄ, իր, 4), «Իսկ թագաւորն և արքայադուռն ամենայն և մեծամեծքն և նախարարքն և ազատքն և զօրքն ամենայն՝ իւրաքանչիւր ԲԵՐԷԻՆ իւզս» (Ա, 395, 1):

Եվ քանի որ ոչ քիչ դեպքերում բազմակի ենթականերն ընդունում են նաև եզակի թվով ստորոգյալ (չնչում հիմնական կանոնից՝ բաղադրություն), ուստի այս երևույթի պատճառները բացատրելուն ավելի շատ ուշադրություն պիտի դարձնել: Արձանագրելով այս փաստը՝ Ա. Մեյլեն գրում է. «Այն խոսքը երկու կամ բազմաթիվ իրերի (ենթակաների—Ա, 2.) մասին է, եզակի (ստորոգյալ—Ա, 2.) նկարագրը է»:

Նախ և առաջ եզակի ստորոգյալ են ընդունում այն բաներով արտահայտված բազմակի ենթակաները, որոնք նույնանիշ են² (օրինակ՝ թշնամի-հակառակորդ, ցեղ-ուտիճ, խնդութիւն-ուրախութիւն և այլն), այսինքն այդ բազմակի ենթակաները ոչ միայն իմաստով են իրար մոտիկ, այլ նույնիսկ միևնույն նշանակությունն են ձեռք բերել: Այդ դեպքում պատմիչները կամ թարգմանիչները բազմակի այդ ենթակաները գիտնում են ոչ թե առանձին, անկախ միավորներ, այլ մեկ ամբողջություն, ամբողջական մի միավոր կամ, ինչպես Մ. Արեղյանն է ասում, մի

¹ A. Meillet, Introduction à l'étude comparative des langues indo-européennes, Paris, 1912, էջ 348:

² J. A. Cirbied, Grammaire de la langue arménienne, Paris, 1823, էջ 573: